


Հ9-9  
32

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅԵ՞Ք

Ա. ԿՈԴ ԶՅՈՒ

ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆ  
ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ  
ՎԵՐԵԼՔԻ ՈՒՂԻՆԵՐՈՎ



ԳՅՈՒՂ.ՀՐԱՑ

1934

ՅԵՐԵՎԱՆ

17 FEB 2010

Արմ.

2-127402

ՄՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅԵՒ

338.14

Խ-26 Ա. ԽԱՆՉՅԱՆ

ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆ  
ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ  
ՎԵՐԵԼՔԻ ՈՒՂԻՆԵՐՈՎ

(ՅԵԶՐԱՓԱԿՄԱՆ ԽՈՍՔ ՀԱՐՎԱԾԱՅԻՆ  
ԱՆԱՍՆԱՊԱՀ ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻ ԶՐՈՒՅՑԻՆ  
1934 թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 20-ԻՆ)

Հ. Բ. Բ. և Լիցք  
Ա. 1935 թ.  
Ակտ № 20

Ինձ. №


ԳՅՈՒՂՂՐԱՑ

1934

ՅԵՐԵՎԱՆ

6 .05. 2013

30.543



Արտագրիչ՝ Խ. Այվազյան  
Դրամի թ 303  
Հանձնվել և արտադրության 1934 հոկտեմբերի 25-ին  
Ստորագրված և տպագրելու 1934 նոյեմբերի 2-ին  
Հըտո. թ 144, տիրաժ 5000, պատվեր թ 616

ՅԵՐԵՎԱՆ, ԳՅՈՒՂՋՐԱՆԻ ՏԱՐԱՆ, ՆԱԼԲԱՆԴՅԱՆ 50

1. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԱՐԻՆ ՓԱԿՈՒՄ ԵՆՔ  
ԴՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՎ

ԸՆԿԵՐՆԵՐ. Այս տարվա սկզբին Հայաստանի Կոմունիստական կուսակցության 9-րդ համագումարը կենտրոնի և մեր քոլոր կուսակցական կազմակերպությունների ու խորհրդային որգանների առաջ մարտական խնդիր դրեց վերացնել Հայաստանի մի շարք շրջանների հետամնացությունը կյուղատնտեսության բնագավառում, ավելի ամրացնել կոլտնտեսությունները, զարկ տալ սոցիալիստական անասնապահության զարգացմանը, առաջ մղել Հայաստանը Խորհրդային Միության առաջավոր հանրապետությունների առաջնորդ:

Այդ խնդիրը վճռելու համար մեր կատարած աշխատանքի հիմքը կազմում եյին և կազմում են այն հանձարեղ ցուցումները, վոր տվեց մեր մեծ առաջնորդ ընկ. Ատալինը, կուսակցության 17-րդ պատմական համագումարում:

Ի՞նչ չափով և հաջողությամբ ենք կատարել և կատարում ընկ. Ատալինի ցուցումները, ի՞նչ հաջողությամբ և վճռվում մեր համագումարի գողմից առաջադրված խնդիրը:

Այս հարցին վորոշ չափով պատասխանում  
են այն գեկույցները, վոր արին այստեղ մեր մի  
շարք առաջավոր կոլտնտեսությունների և Հա-  
յաստանի լավագույն անասնապահների ներկա-  
յացուցիչները:

Մենք արդեն հիմք ունենք նախնական մի-  
շարք ամփոփումներ անելու:

Յետ մնացած մեր լեռնային շրջաններն այս  
տարի զգալի չափով առաջ շարժվեցին: Զնայած  
բավական ծանր պայմաններին, զարնանացանն-  
այդ շրջաններում անցավ ընդհանուր առմաւբ-  
հաջող: Այդ շրջանների պատմության մեջ առա-  
ջին անգամ կոլտնտեսություններն այս տարի  
կազմակերպեցին հացահատիկային արտերի քաղ-  
հանը, և չնայած կլիմայական վոչ այնքան բա-  
րենպաստ պայմաններին, այս տարի, անցյալ տա-  
րիների համեմատությամբ, հավաքեցին շատ ավե-  
լի առատ բերք: Անսամնապահության գծով առաջ-  
յեկան մի շարք դրական տեղաշարժեր: Ծավալ-  
վեց կուլտուրական շինարարությունը, Բասար-  
գեչարի շրջանը, որինակ, խոշոր աշխատանք կա-  
տարեց դպրոցական շինարարության գծով. այս  
տարի միայն այս շրջանում կառուցվեցին և  
ավարտվեցին 16 նոր դպրոցական շենքեր: Բա-  
յազեափ շրջանն աչքի ընկավ գոմաշինարարու-  
թյան գծով ծավալված աշխատանքներով: Մար-

տունու շրջանի կոլտնտեսությունները մեկ հեկ-  
տարից ստացան միջին հաշվով 11,3 ցենտներ  
հացահատիկ՝ անցյալ տարվա 5,5 ցենտների փո-  
խարեն: Թալինի շրջանը հսկայական աշխատանք  
կատարեց ճանապարհինարարության գծով:  
Կոլտնտեսությունները մեր բոլոր շրջաններում  
ավելի ամրացան: Լեռնային շրջանների առաջ-  
խաղացման գործում վճռական նշանակություն  
ունեցավ կուսակցության Յերկրային Կոմիտեյի  
միջամտությունն ու ոգնությունը:

Հիմք ունենք արձանագրելու, վոր Հայաստա-  
նում այս տարի փակում ենք գյուղատնտեսա-  
կան տարին հիմնականում դրական ցուցանիշնե-  
րով: շրջանների մեծագույն մասն անցյալ տարվա  
համեմատությամբ հացահատիկի ավելի առատ  
բերք ստացավ: Շնորհիվ բամբակի ավելի լավ  
մշակման՝ բարձր ե բամբակի բերքը. առ 19-ը  
հոկտեմբերի արգեն հավաքել ենք 7.540 տոնն  
բամբակ՝ անցյալ տարվա 4409 տոննի փոխարեն:  
Բամբակի, ինչպես նաև ծխախոտի հանձնման  
տարեկան պլանը ժամկետից շուտ կկատարենք:  
Ռուստ ե նաև խաղողի բերքը:

Լավ են պետական պարտավորությունների  
կատարման ցուցանիշները. բոլոր հիմնական պար-  
տավորությունները և մթերումներն ընթացել են  
մինչև այժմ կանոնավոր. հացամթերումը բոլոր

շրջաններում և բոլոր սեկտորների գծով հաջո-  
ղությամբ ավարտեցինք. կկատարվի ժամանակին  
նաև հացի գնման գործը: Պետական պարտավո-  
րությունների այդպիսի կատարումը մեր կոլ-  
տնտեսությունների ամրացման կարեվորագույն  
ցուցանիշներից մեկն եւ: Տարփա մկզբի 40 տոկո-  
սի փոխարեն ներկայումս մեր կոլտնտեսություն-  
ներն ընդգրկում են գյուղացիական բոլոր անտե-  
սությունների 46 տոկոսը:

## 2. ՎԱՅՐԵԶՔԸ ԴԱԴԱՐԵՑ, ՍԿՍՎՈՒՄ Ե ՎԵՐԵԼՔԸ

Բայց, ընկերներ, ամենից ավելի ուշադրու-  
թյան արժանի յեն այն տվյալները, վոր ունենք  
անամսապահության ընազավառում: 17-րդ հա-  
մագումաբում ընկ. Խաղինը խնդիրն այնպես  
դրեց, վոր «1934 թիվը կարող է յեվ պիտի ե  
լինի բեկման տարի ամբողջ անսանապահ-  
կան տեսնաուրիյան համար»: Տեսնենք ինչպե՞ս  
ե դրությունը մեղ մոտ:

Անասունների ամբողջ հոտի քանակի տեսա-  
կետից այս տարի Հայաստանում դադարեց վեր-  
ջին 3—4 տարվա վայրեջքը և հակառակ շարժ-  
ման սկիզբը դրվեց: Այսպես, վերջին հաշվառ-  
ման տվյալներով, Հայաստանի խոշոր անտ-  
եսունների թիվն այս տարի կազմում ե անցյալ  
տարվա հոտի 100,5 տոկոսը, մանր անասունների

թիվը՝ գրեթե 100 տոկոսը, խորերինը՝ 175 տո-  
կոսը: Յեթե խոշոր և մանր անասունների  
քանակական աճի մասին գեռ վազաժամ և խոսել,  
ապա ուշազրակ և խիստ դրական են այն փո-  
փոխությունները, վոր այս տարի առաջ յեկան  
անասունների հոտի կազմի մեջ, փոփոխություն-  
ներ, վորոնք նպաստավոր հող են ստեղծում անաս-  
ունապահության առաջիկա տարիների բուռն աձ-  
ման համար: Այսպես, 1933 թվին Հայաստանի  
խոշոր անասունների հոտում 1—2 տարեկան  
մատղաշները 1932 թվի համեմատությամբ կազ-  
մում եյին 90 տոկոս. մինչև մեկ տարեկան հոր-  
թերը՝ 88 տոկոս, իսկ այս տարի անցյալ տար-  
վա համեմատությամբ մատղաշները կազմում են  
138 տոկոս, հորթերը՝ 101 տոկոս: Խիստ ուշա-  
զրակ ե կոլտնտեսական անամսապահության աճը.  
կոլտնտեսությունների խոշոր անասունների հա-  
մայնական հոտը 33 թվին 32 թվի համեմատու-  
թյամբ կազմում եր 92 տոկոս, իսկ 1934 թվին  
1933 թվի համեմատությամբ կազմում՝ ե 120  
տոկոս: Այս աճումը յեզների գծով կազմում ե  
19 տոկոս, կովերի գծով՝ 8 տոկոս, մատղաշների  
գծով՝ 53 տոկոս և հորթերի գծով՝ 26 տոկոս:  
Մանր անասունների կոլտնտեսական համայ-  
նական հոտը Հայաստանում անցյալ տարվա  
համեմատությամբ աճել ե 28 տոկոսով: Այս

թվերը գալիս են մի անգամ ել ապացուցելու, վոր կայուն անասնապահության միաև նանապարհը՝ կոլտինեսական (յեվ խորհրդային սնտուրյունների) անասնապահության նանապարհն ե:

Ցես խոսեցի արգեն անասունների ընդհանուր հոտի կազմի դրական փոփոխությունների մասին: Բերենք մի յերկու թիվ ել: Խոշոր անասունների նախրում 1933 թվին յուրաքանչյուր 100 կովին ընկնում եր 2 տարեկանից ավելի յերին՝ 13 հատ. 1934 թվին՝ 15 հատ: 1—2 տարեկան հորթեր՝ 33 թ. 30 հատ, 34 թ.՝ 42 հատ: Մինչև մեկ տարեկան հորթեր՝ 33 թ.՝ 72 հատ, 34 թ.՝ 77 հատ: Մատղաշների և հորթերի պահպանումն այս տարի ամենադրական յերեռույթն ե անասնապահության գծով և պայմաններ ե ստեղծում առաջիկա 2—3 տարվա ընթացքում լցնելու վերջին տարիների բացը անասունների թվի կրծատման բնագավառում, յեթե միայն ավելի ուժեղանա իրական բոլշեկոյան պայքարը հանուն սոցիալիստական անասնապահության:

Անասնապահության բնագավառում ձեռք բերված այս մի շարք նախնական նվաճումներն արդյունք են անասնապահական առաջավոր շրջանների կուսկազմակերպությունների, քաղբաժինների, առաջավոր կոլտնտեսությունների համառ

պալքարի, բոլշևիկյան աշխատանքի: Այդ նվաճումներն արդյունք են այնպիսի կոլտնտեսությունների աշխատանքի, վորպիսիք են՝ որինակ՝ Համզաչիմանի, Ուգունլարի, Այնալուի, Ուռուտի, Գոյքիլսայի, Զոլախաչի, Աշնակի, Ռնդամալի, Վ, Ղանլիջայի և բազմաթիվ այլ գյուղերի կուտնաեսությունները, վորոնք լավ որինակներ են տալիս այն բանին, թե ինչպես կարելի յե արագ աճեցնել անասնապահությունը ֆերմայի սեփական սերնդով և կուլտուրական բարենորոգություններ մտցնել անասնաբուծության մեջ: Այդ նվաճումներն արդյունք են նաև այնպիսի անձնվեր հովիվների ու անասնապահների աշխատանքի, վորպիսիք այս պատգամավորության մասնակիցներն են, որինակ, ընկ. ընկ. Աբրահամ Թովմասյանը և Կուրբան Մարգանովը (Գյոյքիլսա), Նիկոլ Աբրահամյանը (Բժնի), Խուդոյեվ Բաքիրը (Աբագածի խորհանություն), Փարո Չոբանյանը (Ուռուտ), Մնո Մանուկյանը և Յեղիշե Ավդալյանը (Վ. Թալին), Սիսակ Գրիգորյանը (Զոլախաչ), Արտաշես Խալաթյանը (Ստեփանավանի «Շահումյան») կոլտնտեսություն) և այլ հարյուրավոր ազնիվ ու պարտաճանաչ աշխատավորներ, վորոնք հաճախ կարկտի և անձրևի տակ արթուն ու սրտացավ կերպով հսկում և պահպանում են համայնական հոտերն-ու նախիրները:

Սրանք են և սրանց շարքին նաև տասնյակը  
ու հարյուրամբոր այլ ընկերներ—կոլտնտեսու-  
թյունների ակտիվիստները, հովիվներ, նախրապահն-  
ներ, կթողներ—սրանք են մեր անասնապահա-  
կան մրոնի յերեվելի մարդիկ, սրանց ե, վոր  
պես ե նանաչի, հարգի յնվ սիրի մեր փող  
յերկիրը. սրանց որինակն ե, սրանց պարագանա-  
նաչ և զիտակից աշխատանքի որինակն ե, վոր  
պիտի վարակի հարյուրավոր և հազարավոր նոր  
մարտիկների՝ անասնապահության ֆրոնտում բոլ-  
շևիկյան թափով և վորակով առաջ մղելու համար  
սոցիալիստական անասնապահության զարգաց-  
ման գործը:

Բայց, ընկերներ, չպետք է մոռանալ, վոր մեր  
այս մի քանի նախնական հաջողությունները  
համաչափ չեն սարածվում բոլոր ցցաներին  
վրա: Առաջապոր շրջանների բարձր ցուցանիշ-  
ներն իջնում են Հայաստանի միջին ընդհանուր  
տվյալների մեջ, շնորհիվ այն բանի, վոր մի քանի  
շրջաններ գեռ այս տարի յել չկարողացան անա-  
սունների քանակի նվազման առաջն առնել: 1934  
թվին մենք ունենք անասնապահության գծով  
աճում Ղափանի, Ղարաբիլիսայի, Իջևանի, Դիլիջա-  
նի, Գորիսի, Բասարգեչարի, Ղուրդուղուլու, Լե-  
նինականի, Բայազետի, Ստեփանավանի, Թալինի,  
Շամշադինի շրջաններում: Բայց այս շրջանների

գեմ ունենք անգամ այս տարի հետ մնացող այն-  
պիսի շրջաններ, վորպիսիք են՝ Ախտան, Աբարա-  
նը, Արթիկը և Քեշիշենդը, վորոնք այս տարի  
ել մեծ նվազում են տալիս թե խոշոր և թե մանր  
անասունների գծով՝ Փաշալուն, վոր մեծ կորուստ  
ունի խոշոր անասունների գծով, Մարտունին և  
Ղամարլուն, վորոնք խոշոր կրծատում են տալիս  
մանր անասունների գծով: Ավելացնենք սրան նաև  
այն, վոր ձիերի քանակն այս տարի Հայաստա-  
նում իջել ե անցյալ տարվա համեմատությամբ  
և պարզ կլինի, վոր գեռ խիս անբավարար  
պես ե համարենք մեր ձեռք բերած արդյունք-  
ներն անասնապահության մրոնի յերեսում:

Համկոմկուսի կենտրոմի հունիսյան պլենումի  
գնահատականը, թե՝ «անասնապահության դրու-  
թյունը, ամբողջությամբ վերցված, շարունակում  
է անբավարար մնալ, նրա զարգացումն ընթանում  
է չափազանց գանգաղ, իսկ ձիերի գծով գեռ չի  
դադարել քանակի կրծատումը»—այս գնահատա-  
կանն անմիջականորեն վերաբերում է նաև մեզ:  
Ահա թե ինչու Հայաստանի բոլշևիկների ամե-  
նաառաջնակարգ խնդիրն ե՝ շատ ավելի լարել  
ուժերը, քան մինչև այժմ՝ ամեն մի շրջանում,  
գյուղում և կողմանտեսության մեջ կոնկրետ ձեռ-  
նարկումներով առաջ մղելու համար անասնապա-  
հության գործը:

ի՞նչ հիմնական կետերի վրա յե, վոր պետք ե կենտրոնացնենք մեր ջանքերը:

### 3. ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ամենից առաջ անհրաժեշտ ե, վոր ցանքի պետական պլանի որինակով արմատացնենք անասնաբուծության գծով հաստատում պլան տալու գործը: Համ. Կ. (թ) Կ. Կենտկոմի հունիսյան պլենումն այս առթիվ վորոշեց. «Անասնաբուծության արագ վերելքն ապահովելու համար սահմանվում ե անասնաբուծության դարզացման պետական պլան, հաստատվում են անասունների թվի ավելացման պլանային առաջաղբանքներ խորհնութեսությունների և կոլտնտեսային ապրանքային ֆերմաների համար, մատղաշ անասունների մեծացնելու պլան՝ խորհնութեսությունների, կոլտնտեսությունների, կոլտնտեսականների ու մենատնտեսների համար, ինչպես և կեր արտադրելու պլան՝ հասցնելով այդ պլանները խորհնութեսություններին, կոլտնտեսություններին և գլուղիսորհուրդներին»:

Թեզ մոտ այդպիսի պլանների հիմնական ցուցանիշներն արգեն մշակվել են և ուղարկվել են շրջաններին. Այդ պլանները, վորոնք կոնկրետացվելու յեն շրջաններում ըստ կոլտնտե-

սությունների և գյուղերի, պետք ե կատարվեն պարտադիր կերպով՝ կուսկազմակերպությունների ղեկավարությամբ, անասնաբուծական ֆրոնտի աշխատողների և մանավանդ ֆերմաների վարիչների, հովիտների ու նախրապահների ջանքերով, նրանց ազնիվ ու նվիրված գործունեյությամբ:

Յես, ընկերներ, ասացի, վոր այս տարի նախնական նվաճումներ ունենք կոլտնտեսական անասնաբուծության ընագավառում: Բայց դա գործի միայն սկիզբն է: Իսկ սկիզբն ամուռ ե դրված. մանր, ցրված, խղճուկ անասնաբուծությունից մենք անցել ենք խոշոր կոլտնտեսական ֆերմաների: Այդ յերաշխիք ե տալիս, վոր կարելի յե և պետք ե այդ բնակավառում ևս առաջ գնալ մեծ թափով ու բարձր վորակով:

Բայց հենց այդ առավելությունը, այսինքն՝ անցումը խոշոր տնտեսությունների, պահանջում ե, վոր մեր անասնաբուծ-կոլտնտեսականներն առաջ գնան, տիրապետեն խոշոր տնտեսություն վարելու տեխնիկային, հասկանան նոր, գիտական հիմքերի վրա դրված անասնաբուծության «մանրութները»: Գործն այժմ հենց այդտեղ ել զեմ ե առնում. գործը դեմ ե առնում մեր անկուլտուրականությանը: Խնդիրն այն ե, վոր արմատապես

գոխելով անասնաբուծական տնտեսության սիստեմը (անհատականից—քամայնականի անցնելով), մենք դեռ չենք կարողացել մեր ֆերմաներում նույնպիսի արմատական հեղաշրջում մըտցնել անասնաբուծության տեխնիկայի մեջ:

Հին անասնաբուծությունը, վորի արմատական վերափոխումով ենք մենք այժմ զբաղված, հիմնված եր խեղճության, և անկուլտուրականության վրա: Այդ անկուլտուրականությունը դեռ դուրս չի մղված: Անասուններին անմաքուր պահելը, հիվանդություններից չհասկանալը և չբուժելը, կթելուց առաջ կովի կուրծը չվանալը, մութ, կեղտոտ և ցուրտ գոմերը, անասունների ցեղի բարելավման բացակայությունը, արոտների բարբարոս ոգտագործումը—և անկուլտուրականության այս պառազներն են, վոր մենք բաշվական առատությամբ ունենք դեռ բոլոր շրջանների մի շարք ֆերմաններում: Այդ անկուլտուրականությանը վերջ տալը յեվ անասունների խրնամքը նոր ձեփով կազմակերպելու գործն այժմ մեզ համար ամենակարենվորն է: Այդ ուղղությամբ կա գիտության խոսքը, զոռուեխնիկայի խոսքը և մեր առաջավոր խորհանականությունների ու կոլտնտեսությունների փորձը: Համզաշիմնի, Ստեփանավանի, Ռւզունլարի, Սարատովկայի և տասնյակ այլ կոլտնտեսություններ ար-

գեն անասունները պահում են կուլտուրական գոմերում, ունեն սիլոսի մեծ պաշար, անասունների կուրծն ու աչքերը մաքրելու համար հատուկ սրբիչներ են գործածում, բարելավում են արոտները, և զարմանալի չե, վոր խոշոր արդյունք են ստանում իրենց անասուններից, ժամկետից շուտ կատարում են կաթ հանձննելու պարտավորությունն ու առատ պանիր և յուղ են ուղարկում պահեստ՝ կոլտնտեսականներին ըստ աշխորերի բաշխելու համար:

Անասունների կուլտուրական խնամքի միքանի փաստ բերենք: Գյոգակրուլաղի կոլտնտեսության ֆերմայում անցյալ տարի ամեն մի կովից միջին հաշվով ստացվել ե 4,5 ցենտներ կաթ, իսկ այս տարի, անասունների խնամքը լավացնելու հետևանքով, մինչև հուլիսի վերջն արդյունքները նոր ձեփով կազմակերպելու գործն այժմ մեզ համար ամենակարենվորն է: Այդ ուղղությամբ կա գիտության խոսքը, զոռուեխնիկայի խոսքը և մեր առաջավոր խորհանականությունների ու կոլտնտեսությունների փորձը: Համզաշիմնի, Ստեփանավանի, Ռւզունլարի, Սարատովկայի և տասնյակ այլ կոլտնտեսություններ ար-

նույն կոլտնտեսությունում ամեն մեկ կոչ խարից պլանով այս տարի պետք է ստացվի 60 կիլո կաթ, այնինչ մինչև ոգոստոսի 1-ը ստացվել է արդեն 80 կիլո:

Կարդանք մի հատված կոտայքի շրջանի Գյոյնիլիստ գյուղի կոլտնտեսության հովիվների՝ Կենտկոմին ուղղած նամակից:

«Այս տարի ծնված 399 գաոից և 9 ուլից



մենք կորուստ ենք ունեցել 13-ը, կարակուլ ցեղին պատկանող 8 գառներ ել, վորպես թանգարժեք մորթի ունեցողների, մորթել ենք: Մընացած 387 գառն այնպես լավ ենք խնամել և պահպանել, դուներն այնքան են մեծացել և գիրացել, վոր նրանց միջին քաշը տարեվերջի համար նախատեսված 32 կիլոյի փոխարեն գեւուս ոգոստոսի 25-ին կազմում են 40 կիլո:

Դու, ընկ. Խանջյան, յերևի հիշում ես, վոր համագումարում գովասանքով եյիր խոսում այն մասին, վոր մատղաշների միջին քաշը հասցըրել եյինք 32 կիլոյի, իսկ այժմ մենք շատ գառներ ունենք, վորոնք կշուռակ են 50—55 կիլո:

Հարվածային կոլտնտեսականների համահայտատանշան համագումարում խոսելով մայր վոչխարների կորոսի մասին, դու այն ժամանակ գոհացուցիչ եյիր համարում այն, վոր մենք 100 մայր վոչխարից միայն չորս հատ կորուստ ենք տվել, այնինչ այս տարի մենք 478 մայր վոչխարից, 180 միշակից, 35 դոչից և 14 այծից (ընդամենը 707 հատից) կորուստ ենի սին սիայն 3-ը, վորից 2-ը հիվանդության պատճառով ստակեցին, իսկ գայլերին հաջողվեց տանել մեկը: Գայլերն ամեն տարի ել մեծ զետե են հասցնում մենատնտեսների հատին: Անցյալ տարի գայլերը մենատնտեսների հատից պատա-

ռոտեցին 50-ից ավելի վոչխար, իսկ այս տարի հենց գյուղում գայլը մտնելով գոմբ՝ լափեց մենատնտես Գրիգոր Մուրադյանի և գառը, Ղուկաս Հովեյանի 2 գառը, ել չենք խոսում սարում յեղած կորստի մասին, վորը նույնպես բավականին մեծ է: Բայց մեր առաջից գայլը չի կարողանում վոչխար տանել: Են մեկն ել տարան, վորովհետեւ այդ որը վորոշ պատճառով շները հետ եյին մնացել:

Մենք հաստատ կարող ենք ասել, վոր Կոտայքի շրջանում մեր ֆերմայի վոչխարները և գառները ավելի լավ վիճակի մեջ են, քան մյուս ֆերմաներում. Դրան ապացույց ե այն, վոր մեր ֆերմայում վոչ մի հիվանդություն չկա: Ամենաաննշան վերքը կամ հիվանդությունը մենք անմիջապես բուժում ենք:

Յերբ կոլտնտեսության վարչությունն այս տարի ապրիլին վոչխարը կշռեց և մեզ հանձնեց, ամենալավ մաքին կշռում եր 48 կիլո, միջակը՝ 35 կիլո, սիհարը՝ 23 կիլո, իսկ հիմա լավը կշռում ե 71 կիլո, միջակը՝ 59,7 կիլո, ամենանիարը՝ 49,2 կիլո: Վոչխարներն այսուհետեւ ավելի շատ են գիրանալու, քանի վոր արդեն ցամաքել են և չեն կթվում:

Վո՞րն ե այն գաղտնիքը, վոր մեր վոչխարը թե՛ մեր գյուղի մենատնտեսների, և թե՛ մեր

շրջանի մյուս ֆերմաների վոչխարներից ա-  
վելի լավ ե և գեր: Դրա պատճառը, ընկ-  
հանջան, այն ե, վոր մենք, հովիմներս, մա-  
սավանդ մեր ավագ հովիվ Աբրահամ Թովմաս-  
յանը, ուստ լավ հասկանում են վոչխարի լե-  
զուն՝ թե տարվա վոր յեղանակին ինչպետ  
պետ ե պահել յեվ արածեցնել:

Ահա, ընկերներ, անձնվեր մարդկանց կենդա-  
նի գործը:

Ընկերներ, կուլտուրական անասնաբուժու-  
թյան հարցերը շոշափելիս, յես կուզեյի ձեր ու-  
շադրությունը հատկապես որել մատղաքի խր-  
նամի յեվ պահպանման վրա. Մատղաշը, ընկեր-  
ներ, ֆերմաների հիմքն ե, նրանց աճման հիմնա-  
կան աղբյուրը: Այդ աղբյուրը միշտ վարար-  
պետք ե պահել. կուլտուրական վերաբերմունք-  
ունենալ դեպի մատղաշը և վոչ մի կորուստ-  
չտաք:

Ուրախությամբ կարող ենք նշել, վոր մեր  
կոլտնտեսականներից շատերն արդեն մատղաշի  
հետ սկսել են նոր ձևով վարվել: Դրա որինակը  
մենք տեսանք Սարատովկայում, ուր գեռ հուլի-  
սին մինչև 180 կիլոյանոց հորթեր կային:

Կամ Ղարաքիլիսան, այստեղ նորը և որինա-  
կելին այն ե, վոր Համզաչիմանի, Ղաղղի, Հաջի-  
կելին այն ե, մի քանի այլ գյուղերի սարերում

ամուսն ամիսներում կառուցել եյին տախտակե-  
հատակով մաքուր, չոր ու լուսավոր շարժական  
հորթանոցներ: Այդպիսի 9 հորթանոց կային Ղըշ-  
լաղի սարում, 16 հորթանոց՝ Հաջիղարայի սա-  
րում և 120 հորթի համար լավ հարմարու-  
թյուններ՝ Համզաչիմանի սարում:

Մեծ չափով այդ մաքուր ու չոր հորթանոց-  
ներով պետք է բացատրել այն հանգամանքը,  
վոր Ղարաքիլիսայի շրջանում մատղաշի քիչ կո-  
րուստ յեղավ (չե վոր հորթերն ամենից շատ  
սատկում են ցըտից, խոնավությունից ու փոր-  
լուծից):

Ղարաքիլիսայի ընկերների կազմակերպած  
այս գործը շատ որինակելի յե: Անհրաժեշտ ե  
Հայաստանի բոլոր ֆերմաններում, Ղարաքիլիսա-  
յի որինակով, կուլտուրական բնակարաններ  
կառուցել մատղաշի համար:

Յես կուզեյի, ընկերներ, թվել այն ֆերմա-  
ների անունները, վորտեղ շնորհիվ նրանց վա-  
րիչների, գառնարածների, հորթարածների և կը-  
թողների բարեխիղճ աշխատանքի, մատղաշի կո-  
րուստ կամ չի յեղել կամ այդպիսին հասցվել ե  
շատ փոքր չափերի:

Նայենք այդ ֆերմանների ցուցանիշներին.

Ալլավերդու շրջան.

Ռեզունլարի ֆերման 100 կովից սաւցել ե

97 հորթ: Ֆերմայի հարվածայիններն են — լեռ-  
վոն Նալբանդյանը, Գրիգոր Գորգինյանը, Անիկ  
Ղարգայանը, Խեցո Մամաջյանը: Սրանց լավ-  
աշխատանքի շնորհիվ աճել ե և անասունների  
արդյունավետությունը: Անցյալ տարվա 800  
լիտրի փոխարեն այս տարի ֆերմայի ամեն մի-  
կովը միջին հաշվով տվել է 880 լիտր կաթ:  
Մատղաշների որական աճն այս տարի 480 գրամ  
ե՝ անցյալ տարվա 400 գրամի փոխարեն: Ֆեր-  
մայի վարիչն է ընկ. Մեխակ Չորտնյանը:

Շամուտի ֆերման ամեն 100 մայր վոչխա-  
րից (հաշված նաև ստերջը) ստացել է 86:  
գտո. հարվածայինն ե—Արամ Քոչարյանը:

Աթանի ֆերման ամեն 100 վոչխարից ստա-  
ցել է 88 գտո և 100 կովից (հաշված նաև ըս-  
տերջը)՝ 81 հորթ: Հարվածայինն ե—Մանրա-  
Հակոբյանը:

Մարտունու ցցան:

Զոլախաչի ֆերման հայտնի յե իր բալբաս-  
ցեղի վոչխարներով: Ալբտեղ 479 գտոից սատ-  
կել է միայն մեկ և կես տոկոսը: Ֆերմայի վա-  
րիչն է ընկ. Մահակյան Համբարձումը:

Վերին Քոլաղուանի ֆերմայում 552 գտոնե-  
րից սատկել է միայն 2 տոկոսը: Վարիչն է ընկ-  
Միրսյան Միսակը:

Ներքին Քոլաղուանի ֆերման ծնած 245 վոչ-

խարի գաւներից վոչ մի կորուստ չի տվել: Վարիչն  
ե ընկ. Արշակ Հակոբյանը:

Աբարտի ցցան:

Ղազնաֆարի ֆերման ծնած 412 վոչխարի  
գաւներից կորուստ ե ունեցել ընդամենը 2 տո-  
կոս: Վարիչն է ընկ. Մնացական Սերոբյանը:  
Կուսայի ցցան:

Զառի ֆերմայում ծնած 608 վոչխարի գաւ-  
ներից սատկել է միայն 1 տոկոսը: Վարիչն է  
Յերվանդ Մինասյանը:

Բաշգյուղի ֆերմայում ծնած 312 վոչխարի  
գաւներից սատկել է միայն 1,5 տոկոսը: Վարիչն  
է Մարտիրոսյան Մահակը:

Արթիկի ցցան:

Ղուլիջայի ֆերմայում 38 հորթից վոչ մեկը  
չ սատկել: Վարիչն է ընկ. Աբարտի:

Սյոգութլի ֆերմայում 250 գտոից և 16  
հորթից վոչ մեկը չ սատկել: Վարիչն է ընկ.  
Կարոն:

Իհարկե, բաղմաթիվ են այն ֆերմաները  
(մանավանդ Թալինի, Ղարաբիլիսայի, Սիոյանի,  
Աղբարայի շրջաններում), վորոնը թեև դուրս  
մնացին այս ցուցակից, սակայն պակաս նվա-  
ճումներ չեն ունեցել մատղաշի խնամքի ու  
պահպանման գծով:

Այս որինակները պետք ե բազմապատկել:

Մենք մատղաւը յեվ տռհասարակ աճատունները  
խնամելու գործը բարձր աստիճանի պիտի հաս-  
ցնենք. այսեղ մենք պես ե հասնենք յեվ անց-  
նենք տնասնապահության գծով տռաջափոր կա-  
պիտալիսական յերեններից՝ Հոլանդիայից, Դա-  
նիայից, Նվեգարդիայից:

Իսկ դրա համար հարկավոր է, վոր աճա-  
նաբուժական մրումի բոլոր աշխատողները կուլ-  
տուրական լինեն:

Մեր կուսակցության կենտրոնական որգան  
«Պրավդան» ամենայն իրավամբ վերջերս զբում  
եր, թե՝ «Նախրապանն ու հոգիվաններն-անտեր  
մարդիկ են: Նրանք զյուղի ամենահետին մար-  
դիկն են: Այսպես եյին գնահատում նախրապա-  
նին ու հոգիին հին մենատնտեսային զյուղում»:

Այժմ նրանց ձեռքին ե գտնվում մեր աճա-  
նաբուժության բախտը. այժմ նրանք զործի  
տերն են: Հետևապես նրանք այժմ պետք ե  
կուլտուրական, զիտուն և խելացի տերեր լինեն:  
Այժմ միայն փորձով շատ առաջ գնալ չես կա-  
րող: Առաջ քո յերկրու կոմի եր ու մի մողին,  
իսկ այժմ ահազին նախիր, ցեղական անասուն-  
ների նոր գոմեր, կաթ մշակելու մեքենաներ:  
Այժմ պահանջվում ե հասկանալ այդ բոլորից.  
հասկանալ աճատունի լեզուն, գրագետ լինել,  
սիրապեսել զոտեխնիկային:

Այդ գծով Հողժողկոմատի որգանների պար-  
տականությունը շատ մեծ է: «Պրավդա»-ի բերա-  
նով կուսակցությունը հարցն այսպես ե դնում:

«Ժամանակն է, վոր հողային որգաններն ընդ-  
հուպ մոտենան նախրապանների և հոգիվանների  
փորակի բարձրացմանը: Զմեռային ըլջանում  
փոշ միայն պետք ե քննության առնել նախ-  
րապանների և նրանց ոգնականների ամբողջ  
կազմը, այլև պետք ե նրանց գասընթացներ  
ուղարկել: Միայն նրան կարելի յէ կոլտնե-  
սային չորսն յեվ նախրապան ընդունել, ով  
սիրապեսում ե զոտեխնիկական յեվ աճա-  
նաբուժական մինիստրին»:

Ըսկերներ, առաջիկա ձմռանը պատրաստվե-  
լու հարցերին անցնելուց առաջ, յես կուղեյի  
յերկու խոսք ասել մի կարևոր հարցի մասին:  
Դա մեր աճատունների ցեղը բարելավելու  
հարցն է:

Սոցիալիստական տնտեսության համար ուղ-  
ղակի անհանդուրժելի յէ մեր աճատունների մեկ  
խոշոր մասի փորակը և «ցեղը»: Մետխացիայի  
միջոցով մենք կարող ենք բարելավել աճատուն-  
ների ցեղը, ստանալ լավ սերունդ, նոր սերնդից  
ների լավ, սերունդ, և այդպիսով ժամանա-  
կի ընթացքում մեր նախիրը ցեղային, լավորակ  
կազմ կունենա:

**Սետիսացման** գործը, վոր նոր և սկսվել՝  
այժմ իսկ հիանալի արդյունքներ ե տալիս: Յես  
յերբ յեղա Սարատովկայի կոլտնտեսությունում,  
զարմանքով ու հիացմունքով եյի նայում կոլ-  
տնտեսության մետիս հորթերին («շվից» ցեղից)  
վորոնք վեց ամսակուն հասակում արդեն տեղա-  
կան կովերի յերինչների չափ եյին:

Նույն շրջանի Շագարդայի ֆերմայում մի  
տարեկան «Գիգանտ» ցուլիկը կշռում է 520  
կիլո, իսկ «Փաշա»-ն՝ մի տարեկան սիմենտար  
ցուլիկը՝ 500 կիլո: «Միլկա» կովի «Լորդ» հորթի  
սկզբնական քաշը յեղել է 48 կիլո («Լորդ»  
ծնվել է փետրվարի սկզբներին), իսկ այժմ նը-  
րա քաշը հավասար է 230 կիլոյի:

«Խնալ» կովի հորթի ծնված որվա կենդանի  
քաշը յեղել է 42 կիլո: Նախատեսված եր, վոր  
«Խնալ» հորթը մայիս ամսին պետք է աճի 12  
կիլո, այսինչ 12-ի փոխարեն ավելացել է 25  
կիլոյով. այժմ այդ հորթի կենդանի քաշը հավա-  
սար է մոտ 210 կիլոյի: «Ալախ» սիմենտար  
կովի հորթի 2 ամիսը չլրացած՝ նրա կենդանի  
քաշը հավասար եր 70 կիլոյի:

Անա ցեղական և մետիս անասունների սե-  
րունդը:

Չնեղանաք, ընկերներ, յեթե ասեմ, վոր մեր  
հովիվ ընկերների մեծ մասը դեռ պահպանողա-

կան ե նորմուծությունների հանդեպ, դեռ ուր-  
տալի չի մոտենում մետիսացման գործին: Սն-  
ցյալ աշնանը, որինակ, Հողժողկոմատը թանգար-  
ժեր և արդյունավետ մերինոս ցեղի խոյեր ու-  
ղարկեց շրջանները: Բայց ահա Դիլիջանի Պողոս-  
քիլիսա գյուղի կոլտնտեսության չորանները  
խոյերին վոչխարի մոտ չթողին: «Ես ի՞նչ են,  
ես պոչափոր շները. սրանց բեղմնավորած վոշ-  
խարից ով գիտի, թե ի՞նչ ջանափար դուրս կլ-  
գա»,—ասել եյին նրանք:

Իհարկե, նրանք չարաչար սիսալվում են և  
գրկվում մեծ ոգուտից: Կոտայքի շրջանի Զառ  
գյուղի կոլտնտեսականների մի մասի մեջ ել  
սկզբում այդպիսի տրամադրություն կար: Իսկ  
յերբ խելքի յեկան՝ տեսան, վոր տեղական սա-  
գելս ցեղի վոչխարը զուգավորվելով ցեղական  
կարակուլ խոյի հետ՝ արդեն առաջին սերնդից  
ստացվում են այնպիսի գառներ, վորոնք մի քա-  
նի անգամ թանգ են զնահատվում, քան տեղա-  
կան վոչխարների գառները:

Փորձը ցույց է տվել, վոր մետիս կովերի  
կաթնատվությունը մեծ չափով բարձր է տեղա-  
կան կովերի կաթնատվությունից: Կարելի յե-  
րազմաթիվ որինակներ բերել այդ ապացուցելու  
համար: Ստեփանավանի շրջանի «Ստալին-Շա-  
հումյան» կոլտնտեսության ֆերմայի շիցի մե-  
տիս կովերից կարելի յէ թվել հետեւյալները.

«Առւրմա» կովը մեկ տարւա ընթացքում տվել  
և 32 ցենտներ բարձրորակ կաթ: Նույն ֆերմա-  
յի «Մալենկա» կովը տվել է՝ 30, իսկ սիմենտավի  
խառնուրդ «Լիսկի» կովը՝ 27 ցենտներ կաթ:

Մրանք կաթնատվության ուեկորդային թվեր  
են, իեթե հաշվի առնենք, վոր տեղական կովերը  
միջին հաշվով տալիս են վոչ ավելի, քան 6—7  
ցենտներ կաթ:

Ահա, այսպիսի անասուններ պետք ե ստեղ-  
ծենք և պահենք, ընկեր հովիժներ ու նախրա-  
պաններ:

Սակայն վոչ ամեն տեղ ցեղական անասուն-  
ներն ու հատկապես մատղաշը շրջապատված են  
անհրաժեշտ հոգատարությամբ ու խնամքով: Յե-  
ղել են դեպքեր, յերբ ցեղական մատղաշի խնամ-  
քը հանձնարարված ե անփորձ, անամնապահու-  
թյանն անծանոթ մարդկանց, շատ անգամ ել ուղղա-  
կի յերեխաններին: Հաճախ նրանց պահել են կեղտոտ,  
վորի հետևանքով մատղաշները վարակվել են քոսով  
և վոջիլով: Մազրայի ֆերմայում վատ խնամքի  
և թափթփվածության հետևանքով զտարյուն ցե-  
ղական ցուլը գրեթե անպետքության և հասցված:  
Ստեփանավանի շրջանում ցեղական հորթերի  
կորուսի մեծ տոկոսն աշխատում եյին նորմալ  
համարել ցեղական անասունի քնքշությունը  
պատճառաբանելով: Անասունների ցեղն ազնվաց-

նելու գործում կառավարությունն ոգնում է  
կոլտնտեսականին և այսուհետև ավելի շատ ե-  
ոգնելու: Կոլտնտեսությունների ֆերմաների տնա-  
սուններն ազնվացնելու նպատակով, վերջին  
2—3 տարվա ընթացքում Հայաստան և ներ-  
մուծվել և արգել ֆերմաներին 110, գլուխ և վիզ  
և սիմենտալ ցեղի ցուլեր, 250 անգլիական  
յորկչիր ցեղի խողեր և 300 ցեղական խոյեր:  
Այս տարի նորից ներմուծվում ե 150 գլուխ և վիզ  
ցուլ և ցուլիկ:

Ցեղական արտադրողներ տալով ձեզ՝ պե-  
տությունն ասում ե, վերցրեք զարգացրեք և վիզ  
ցեղը խոշոր անասունների՝ մեջ, բալբար և մա-  
սամբ ել կարակուլն ու մերինոսը՝ վոչխարի մեջ  
և յորկչիրը՝ խողերի մեջ: Ձեզ մնում ե հա-  
տուկ խնամք տանել ցեղական այդ թանգարժեք  
արտադրողներին, լրիվ ու խելոք ոգտագործել  
նրանց և աչքի լույսի պես պահել ու զարգացնել  
նրանց սերունդը:

Այսպես դնելով մետիսացման խնդիրները,  
չպետք ե մոռանալ սակայն, վոր ցեղական անա-  
սունների կաթնատվությունն ու մթերատվու-  
թյունը կարելի յե զգալի չափով բարձրացնել՝  
արդ անասուններն ավելի լավ խնամելով: Մետի-  
սացումը մի կողմից, խնամքի բարելավմամբ տե-  
ղական անասունների վորակի բարձրացումը

մյուս կողմից, հիմնական լծակները պետք ե դառնախ մեր անասնապահության վորակի բարձրացման ասպարիգում:

Ընկերներ, ձմռանը պատրաստվելու հարցերը շոշափելիս, յես ուղում եմ դիտավորյալ կերպով աշխատանքի կազմակերպման հարցերն առաջ գցել, վորովմանեվ ամեն ինչ կախված ե գործի նիւթ կազմակերպումից: Այստեղ զիմավորն այն է, որ վերացվի դիմագրկությունը: Ձեզ հայտնի յե, թե մեր կոլտնտեսությունների մի մասը վորքան տուժեց՝ հողը, ինվենտարը և անասունները բրիգադներին մշտապես ամրացնելու մասին կուսակցության տված դիրեկտիվը խախտելու հետևանքով: Մենք գաշտավարության մեջ ստեղծեցինք կայուն բրիգադ, բրիգադը ճանաչեց իր մշտական հողն ու ջանք թափեց նրա վրա: Հետևանքը ռեղավ մեր կոլտնտեսական դաշտերի առատ բերքը:

Բայց այդպիսի կայուն բրիգադ մենք անառնաբռնածական չեն ֆերմաններում գեռ չունենք:

Շատ տեղեր գաշտավարական բրիգուդի անդամներին ձմեռը հերթով ամրացնում են անառներին, իսկ անամնաբռնածական բրիգադի անդամներին կարճ ժամանակով մաս-մաս ազատում են գործից: Այդ յերեւոյթը տարածված ե շատ կոլտնտեսություններում: Մարդիկ այսպես

են պատճառաբանում՝ «Ինչու անասնապահն ամբողջ տարին աշխոր ստանա, իսկ դաշտավարության մեջ աշխատողը՝ միայն 7—8 ամիս»:

Բացի դրանից, առհասարակ հոսունություն և նկատվում անասնապահական բրիգադներում, կազմերը ֆերմաններում չեն ամրացվում յերկարագու ժամանակով:

Հետագոտությունը ցույց է տվել, վոր մեր վոշխարաբուծական ֆերմանների 501 աշխատողից ֆերմայում վեց ամսից պակաս աշխատում են 172 հոգի, մինչեւ մեկ տարի աշխատում են 74 հոգի, մեկ տարբուց ավելի՝ 255 հոգի: Յեթե ֆերմանների աշխատողների 35 տոկոսը վեց ամսից ել պակաս և աշխատում ֆերմաններում, ապա պարզ է, թե նրանք ինչ չափով կճանաչեն ֆերմայի անասուններին և ինչ չափով կիմնամեն յուրաքանչյուր անասունին իր պահանջի ու բնավորության համապատասխան:

Որան զուգընթաց տեղ-տեղ նկատվում է, վոր լավագույն կազմերը տրվում են դաշտավարությանը, իսկ ֆերմանները չեն ապահովվում կարող ուժերով: Քիչ չեն նաև այն գեղքերը, յերբ փորձված անասնապահները վար ու ցանքով են զբաղվում, կամ տրանսպորտի ու վիճարաբռնածական վրա յեն աշխատում, իսկ ֆերմայում պոստերը մնացել են անփորձ մարդկանց ձեռքին:

Այսպես շարունակել չի կարելի, ընկերները  
Պետք է տրանսպորտից ու դաշտավարությունից  
Փորձված անասնապահներին, վստահելի և անձ-  
նվեր կոլտնտեսականներին տեղափոխել ֆերմա,  
ստուգել ու ամրացնել ֆերմաների կադրերը և,  
վոր գլխավորն է, վերջ տալ հոսունության ա-  
նասնապահական բրիգադներում և ըստ ամե-  
նայնի կայուն ու մօսական բրիգադներ ստե-  
ծել բոլոր ժերմաներում:

Ընկերներ, ձիւտն ասած՝ վոչ միայն հովիվ-  
ները, այլև ֆերմայի վարիչներից շատերն ան-  
դամ լավ չեն գլուխ հանում անասնաբուծության  
ըստքառի աշխատանքի կազմակերպման ման-  
ըստքից:

Վերցնենք հենց այն հարցը, թե ձեզ մոտ,  
ֆերմաներում, ինչպես են կիրառում գործարքը՝  
վորպեսզի ապահովվի, որինակ, մատղաշների նոր-  
մանը: Այդ ամենակարենորն է. չե՞ վոր մատ-  
ղաշի գրությունից ե կախված մեր ֆերմաների  
ապագան:

Գործարքն այս գծով մինչև այժմ ել շարու-  
նակում ե սխալ կիրառվել ֆերմաների մի մա-  
սում: Այդ սխալը ցույց տալու համար բերենք  
զշաղի ֆերմայի որինակը:

Այդտեղ կթողը հորթի աձման համար աշխոր  
և ստանում մինչև հորթի 2 ամսական դառնալը:

2 ամսականից վեր հորթերի աձման համար կը-  
թողները պատասխանատու չեն: Բայց չե՞ վոր  
հորթի աձման գործում կաթը գեռ ահազին  
դեր ե խաղում մինչև նրա 6—7 ամսական դառ-  
նալը: Յեվհանաթե ինչ ե ստացվում: Կթողը 2 ամ-  
սականից վեր հորթերի բաժինը կթում ե ան-  
խնա կերպով, քամում ե մինչև վերջին շիթը,  
վորպեսզի շատ կաթ հանձնի և շատ աշխոր ստա-  
նա, իսկ հորթը նիհարում ե:

Յեվ զարմանալի չե, վոր այժմ չաջիղարայի  
ֆերմայի հորթերը նիհար են (այստեղ ել ե այդ  
ձեւ կիրառվում):

Այդ սխալին պետք ե վերջ տալ, մատղաշի  
աձման համար աշխոր պիտի ստանա և պատաս-  
խանատու պետք ե լինի նաև կթողը:

Վերցնենք ձեզ բոլորիդ հետաքրքրող մի այլ  
հարց—հովիվերի վարձատրության հարցը: Այս-  
տեղ նույնպես սխաներ են կատարվում: Յեր-  
բեմն հովիվերին ու նախրապահներին աշխոր են  
տալիս վոչ թե նրանց պահած անասունների քա-  
շի, բրդի ու կաթի համեմատ, այլ միայն անա-  
սունների քանակի համեմատ: Այստեղ լավ աշ-  
խատող և փորձված հովիվը տուժում է, քանի վոր  
անպետք հովիվն հավասար ե ստանում: Գա-  
ռունը հովիվ համար ամենից դժվար և հետևա-  
պիս ամենից շատ աշխոր վաստակելու շրջանն  
է: Նա անձրևի, հեղեղի տակ գիշեր-ցերեկ խոտի  
մեջ ե և ծնեցնում ու ինամում և գալներին:

Դրա համար նրան գարնանը շատ ավելի յեն աշխոր տալիս, քան ամառը և աշնանը: Բայց ահա Հաջողաբայի ընկերները հովիվների համար այնպիսի նորմաներ եյին սահմանել, փոր նրանք դարնան սեզոնում զիշեր-ցերեկ աշխատելով՝ որական  $\frac{3}{4}$  աշխորից շատ չեն ստացել, իսկ կըթողները, փոր միայն ցերեկն են աշխատում և մոտ 2 անգամ պակաս պետք ե ստանան հովից, ստացել են նրանցից  $1\frac{1}{2}$ —2 անգամ պելի:

Կամ գերցնենք ֆերմայի ղեկավար կազմի վարձատրման հարցը:

Ստեփանավանի շրջանում ֆերմաների վարիչները հաշվում են վարչական ապարատի աշխատողներ՝ կայուն վարձատրությամբ: Որինակ՝ «Մտալին-Շահումյան» կոլտնտեսության Շագարդայի ֆերմայի վարիչը, անկախ ֆերմայի անտանապահական դրությունից, անկախ մատղաշների աճումից կամ նվազումից, ստանում է որական 1,25 կայուն աշխոր:

Կուրթանի ֆերմայի վարիչն որական ստանում է մեկ աշխոր, Վարդաբլիրի ֆերմայի վարիչը՝ ամսական 25 աշխոր, իսկ Գյուլագարակի ֆերմայի վարիչը, տարվա կեսն անցել եր, բայց դեռ չգիտեր, թե ինչպես և ինչքան աշխոր պետք ե ստանա:

Ուղունլարի ֆերմայի վարիչ ընկ, Զորանյանն ամսական ստանում է 18 աշխոր, անկախ

նրանից, թե ինչպես են կատարվում կաթի, մսի ու ըրդի պլանները ֆերմայում:

Պարզ է, փոր գործի շահը պահանջում է վերջ տալ այդ սխալներին, մերմաների վարչների, հովիճների, նախապահների յեվ կրողների աշխորների բանակը խիս կախման մեջ դնել երրանց կատարած գործի արդյունիքը—անասունների դրուրյունից, կարի, մսի, բրդի նախակից յեվ առհասարակ մերմայի պլանների կատարումից:

Ընկերներ, այժմ ձմռանը պատրաստվելու ամենակարևոր հարցը զոմերի օբյեկտության, նորոգման ու կահավորման հարցն է: Դուք, ընկերներ, արդեն տեսնում եք, փոր գյուղում կոլտնտեսական կարգերը հաղթանակելուց հետո, փոխվում ե նաև մեր անասունների բնակարանը: Նահապետական հին, մութ գետնափոր գոմերի կողքին բաղմաթիվ կոլտնտեսություններում բարձրանում են տաշված քարերով, սալահատակված, լուսավոր և ողառատ գոմեր:

Մինչև այս տարվա հունվարի 1-ի արդեն կառուցվել ու հանձնվել են ոգտագործման 108 գոմ՝ 10.500 կովի համար, վոչխարի նոր տիպի՝ 31 փարախ՝ 19.200 վոչխարի համար, 7 խոզանոց՝ 375 խոզի համար: Այս տարի արդեն կառուցվել և ավարտվել են 53 գոմ՝ 4.800 կովի համար, 8 փարախ՝ 4.500 վոչխարի համար և 9 խոզանոց՝ 390 խոզի համար:

կատարվածը քիչ բան չե, բայց պետք ենկատի ունենալ, վոր համայնական անսասունների մեծ մասը գեռ մնում են հին գոմերում, ուր դժվար ե որինակելի կարգ ու կանոն հաստատել: Մեր բոլորի խնդիրն ե ընտիր գոմերի մեջ պահել մեր բոլոր անասունները, իսկ դա կախված է առաջին հերթին ձեզանից, տեղական աշխատողների ջանքերից:

Ընկերներ, կոլտնտեսականների շարքերից սոր կարգերի շնորհիվ դուրս յեկան տաղանդավոր շինարարներ: Յես վորպես որինակ կբերեմ յենինականի շրջանի Վ. Ղանլիջա գյուղի կոլտընտեսության նախագահ ընկ. Գեղորգ Մանուկյանին, վորի շինարարական տաղանդի շնորհիվ վերջին յերեք տարվա ընթացքում կոլտնտեսությունն 8 նոր և խոշոր գոմ ե կառուցել:

Գեղորգի նման պիտի կառուցել, ընկերներ: Կառուցել արագ, բարձր վորակով, շնորհքով: Մինչդեռ մեզ մոտ գեռ շատերը նոր գործին հին գյուղացու, մենատնտեսի աշքով են նայում: Այսպես, որինակ՝ Աբարանի Դանագիրմազ գյուղի կոլտնտեսությունն ել ե գոմ կառուցել: Այդդեռ պատերի հաշիվները սխալ են արված, կառուցումը վատորակ ե և այժմ հողբաժինը վորոշել ե այդ շենքը դարձնել մարագ: Ամեն որ հսկեցեք շինարարությանը, թույլ մի սարք վատորակ շինարարություն և այն ժամանակ կունենանք լավ գոմեր, ուր մատղաշի կորուստն ել

կովազի, ծինն ել հաջող կկազմակերպվի, տավարն ել առողջ կինի:

Պետք ե ձգտել, վոր առաջիկա 2—3 տարվա ընթացքում մեր բոլոր մերմաներն ապահովված լինեն վոչ միայն լավ գուերով, այլեվ բոլոր գոմերն ունենան ջուր, սփառաւառուներ, միզամբարներ, ձննդատուն, մեկուսարան և հորթանոց՝ բոլորը նոր ձեի, հարմարեցված սոցիալիստական անասնապահության պահանջներին:

Մեզ համար, ընկերներ, ինչպես գիտեք, անասնաբուծության բնագավառում կերի հարցը կենտրոնական, գլխավոր հարցն ե: Զնայած ամառվա սկզբի մասնակի յերաշտին, այս տարի խոտնածի պլանը Հայաստանի կոլտնտեսությունները կատարել են 101,3 տոկոսով, իսկ սիլոսի պլանի թերակատարումը պետք ե վերացվի մինչեւ յերեք մեկը: Այդ գծով առանձնապես խրախուսելի գործ կատարեցին Թալինի, Ղարաքիլիսայի, Աբարանի և Աշտարակի շրջանները, վորոնք խոտնածի պլանները կատարեցին 110.ից (Ղարաքիլիսա) մինչև 168 (Թալին) տոկոսով:

Սակայն առանձին շրջաններ և կոլտնտեսություններ մեծ մասամբ իրենց վատ աշխատանքի պատճառով կերի պակասություն ունեն: Անկախ դրանից ել՝ մեր յերկրի կիմայական պայմանները ձեզ հայտնի յե, գարունը կարող ե ուշանալ, ուստի վոչ մի գեպքում չի կարելի շռայլել կերը:

Հարկավոր ե կերը լավ պահպանել փչացում-ներից, դաշտում մնացածը շուտ բերել, ամուր ցան-կապատել: Պետք ե կերի ավելի լավ մասը թող-նել գարնանը, գարնանացանի, ինչպես և նեղ որդա-համար հատուկ փոնդեր առանձնացնել: Կերը պետք ե գործածել չափով ու խիս ոեթիմով

Ընկերներ, Համ. Կ(բ)Կ կենտկոմի վերջին պլենումը վորոշում ընդունեց բոլոր կոլտնտե-սություններում անասնապահական ֆերմաներ կազմակերպելու մասին, վորոնք վճռական գեր են խաղում ընդհանրապես անասնապահության դարգացման գործում:

Յուրաքանչյուր կոլտնտեսությունում ֆերմա կազմակերպելու լողունգը կարևորագույն անտե-սական և քաղաքական նշանակություն ունի:

Նոր ֆերմաների կազմակերպումը պիտի կա-տարի մատղաշների լավագույն պահպանման ու աճեցման միջոցով, կոլտնտեսականներից անա-սուններ գնելու և կոնտրակտացիայի յենթար-կելու միջոցով, խորհանտեսություններից անտ-ուններ ձեռք բերելու միջոցով:

Բոլոր կոլտնտեսությունները ֆերմայով ապա-հովելու համար մեղ մոտ վերջերս վորոշ քայլեր արվեցին: Լեռնային շրջանների կոլտնտեսու-թյունները խորհանտեսություններից ստացան բավական խոշոր թվով անասուններ: Կազմակերպ-վել ե կաթնապրանքային 162 նոր ֆերմա՝ 8.340 խոշոր անասուններով, վոչխարաբուծական

100 ֆերմա՝ 30.300 վոչխարով և խոզաբուծական 8 ֆերմա՝ 547 խոզով:

Այժմ Հայաստանի 956 կոլտնտեսություննե-րից 550-ը ֆերմա ունեն: Բայց չե վոր մնացած 406 կոլտնտեսությունները ֆերմա չունեն: Անգամ անասնաբուծության տեսակետից այնպիսի կա-րենոր շրջաններ, վորպիսիք են՝ Ղարաքիլիսան, Աղբաբան, Սիսյանը, բավական թվով գյուղեր ունեն, ուր հանրայնացված միթերատու անասուն-ներ կան, սակայն դրանց թիվը ավելացնելու և ֆերմաներ կազմակերպելու ուղղությամբ բա-ցակայում ե յեռանդուն աշխատանքը:

Պետք ե ձեռնամուխ լինել Համ. Կ(բ)Կ կենտ-կոմի պլենումի այդ մարտական գիրեկտիվը կա-տարելու գործին այն հաշվով, վոր առաջիկա ժամանակներս յուրաքանչյուր կոլտնտեսություն-ունենա իր ֆերման:

Նոր մերմաներ կազմակերպելու, ինչպես յեվ հեներ ուժեղացնելու նպատակով անհրաժեշտ ե, վոր յուրաքանչյուր կոլտնտեսություն այս տարգա-առա բերից վորու մաս հատկացնի իր անա-նապահությանը:

Ընկերներ, այս խնդիրները մեծ հաջողու-թյամբ գնոելու և Միության առաջնակաբագ ա-նասնաբուծական ուայոններից մեկը դառնալու բոլոր նախադրյաները մեղ մոտ կան: Մեր ալ-պիական արոտները, ցանքաշրջանառություն-մտցնելու հետևանքով խոտայանության և շա-

ըահերկ բույսերի մշակության հեռանկարները  
կերի ամուր բազա յեն հանդիսանում մեր հոտե-  
րի և նախիրների համար: Կար ժամանակ, վոր կու-  
լակային-կոնդրատեվյան միքանի «մասնագետներ»  
ճգնում եյին ապացուցել, վոր Հայաստանում ամեն  
մի հեկտար հողին նորմայից ավելի անասուն է  
ընկում, հետեապես անասնապահությունը Հա-  
յաստանում հեռանկարներ չունի:

Այդպիսի «մասնագետները» ժողովրդի թշնա-  
միներն են: Մենք արոտների ու խոտհարք-  
ների պակասություն չունենք և մեր ներկա տե-  
րիտորիայի վրա կարելի յե մի քանի անգամ ա-  
վելի շատ անասուն պահել, քան այժմ ունենք:  
Մեր գյուղատնտեսությունը մեխանիզացիայի ու  
ելեկտրիֆիկացիայի յե յենթարկվում մեծ ա-  
րագությամբ: Շուտով Ստեփանավանում կազ-  
մակերպվի փորձնական զոտեխնիկական մեքե-  
նայական կայանը, վորը ճնարավորին չափ մե-  
խանիզացիայի պիտի յենթարկի անասնաբուծու-  
թյան ու կաթնատնտեսության պրոցեսները և  
այդ շրջանի անասնաբուծությունը կազմակերպ-  
վելու յե գիտական հիմունքներով: Առաջիկա տա-  
րիների ընթացքում կբարելավվեն մեր անասուն-  
ների ցեղերը, արմատապես կբարելավվեն արոտ-  
ներն ու խոտհարքները, մեծ չափերով կընդար-  
ձակվեն խոտարույսերի, սիլոսային կուլտուրա-  
ների և արմատապտուղների կուլտուրաները: Հետ-  
զհետե կկուլտուրականանան, վեր կելնեն, դրա-

գետ ու բանիմաց կդառնան նույնպես հազարա-  
վոր հոգիներ, կթողներ, տավարածներ, հին գյու-  
ղի այդ թափառաշրջիկ ու խավար մարդիկ:

Կոլտնտեսական կարգերի վերջնական հող-  
թանակի լայն ու ամուր բազայի վրա, սոցիա-  
լիստական բազայի վրա առաջիկա տարիներում  
մեծ թափով կզարգանա մեր անասնաբուծու-  
թյունը, կակավի մեր անասնաբուծության իսկա-  
կան ծաղկումը և մեր յերկիրը կդառնա Միու-  
թյան առաջնակարգ անամնապահական շրջաննե-  
րից մեկը:

#### 4. ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ԱՌԱՏՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՈՒՆԵՎՈՐ ԿՅԱՆՔԻ ՀԱՄԱՐ, ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Ընկերներ, վերջացնելով անասնաբուծության  
հիմնական հարցերին նվիրված իմ խոսքը, յես  
վերջում կուղեյի հիշատակել այն հանգամանքը,  
վոր այս տարի աշքի ընկնող քայլ արվեց բեր-  
քատվության բարձրացման, կոլտնտեսություն-  
ների ամրապնդման և կոլտնտեսականներին ու-  
նեվոր դարձնելու մեծ գործի ձանապարհին:

Կոլտնտեսություններն ավելի շատ բերք են  
բաշխում կոլտնտեսականներին՝ ըստ աշխորերի,  
քան անցյալ տարի:

Ստալինի արև պարզ ու հանձարեղ միտքը,  
թե՝ «Վորպեսզի կոլտնտեսականներն ունեվոր  
դատնան, այժմ անհրաժեշտ է միայն մի բան՝

աշխատել կոլտնեսության մեջ ազնվորեն, կանոնավոր ոգտագործել տրակուրեներն ու մեմնաները, կանոնավոր ոգտագործել լծկաները, նիւթ մշակել հողը, խնամքով պահպանել կոլտնեսական սեփականությունը»—դարձել է պայքարի դրոշ, դառնում է կենդանի գործ:

Թույլ ավեր, ընկերներ, այդ առթիվ մի քանի դյուդերից մի քանի փաստեր թվարկել:

Արգելու կոլտնեսությունը կոլտնտեսականների յուրաքանչյուր աշխորին տվել է 11 կիլո 400 գրամ հացահատիկ:

Կոլտնտեսական Պատիլ Մասուլովն այս տարի ստանում է 66 ցենտներ հացահատիկ, 300 կիլո լոբի, 300 կիլո կարտոֆիլ, 600 կիլո գազար, 60 կիլո սիսեռ, 800 հատ գարունդ, 4800 կիլո հարդ, 1200 կիլո խոտ, 360 կիլո պամիդոր, 60 կիլո ծխախոտ, 400 ու գրամ և այլ բանջարեղեն:

Զառի կոլտնեսությունն այս տարի մեկ աշխորին տալիս է 12 կիլո հացահատիկ: Շատ կոլտնտեսականներ ստանում են 3—4 հարյուր փ. հացահատիկ: Կոլտնտեսական Գրիգոր Հարությունյանը իր ընտանիքի աշխատունակ անդամների հետ միասին վաստակել է 600 աշխոր, վորի փոխարեն ստանում է 474 փութ հացահատիկ, 60 կիլո յուղ, 120 կիլո պանիր, 20 կիլո բուրդ, 15 կիլո ձեթ և այլն:

Հարությունյանի ընտանիքը բաղկացած է 4 շնչից:

Վեղու շրջանի Փ. Վեդիի կոլտնտեսությունն

այս տարի ամեն մի հեկտարից ստացել է 24 ցենտներ ցորեն: Կոլտնտեսականների ընդհանուր ժողովի վորոշմամբ համապատասխան փոնդ է հատկացված խոշոր յեղջուրավոր անասունների թիվը և ձիերի թիվն ավելացնելու համար: Բոլոր փոնդերը կազմելուց և պարտքերը վճարելուց հետո, մեկ աշխորին ընկնում է 15 կիլոգրամ հացահատիկ, վորից 14 կիլո 27 գրամ ցորեն:

Կան կոլտնտեսականներ, վորոնք մինչև 500 փութ հաց են ստանում: Այսպես, որինակ՝ Մանուկ Զարոյանը (8 տուն) այս տարի ստացել է 520 փութ հաց, Վահան Սիմոնյանը (5 տուն) ստացել է 350 փութ:

Սարգարաբաղի Ղուզիգիլդան գյուղում բազմաթիվ կոլտնտեսականներ հենց այս տարվանից արգեն իսկ դառնում են ունենություն գյուղում 50-ից ավելի կոլտնեսական այս տարի իրենց համար նոր սենյակներ են սինում:

Լենինականի Յասաղուլի կոլտնեսությունը բոլոր պարտքերը փակելուց, փոնդերն առանձնացնելուց հետո, այս տարի անցյալ տարվա 11,5 կիլոյի փոխարեն մեկ աշխորին տվել է 15 կիլո 873 գրամ հացահատիկ, վորից 14 կիլոն ցորեն: Կոլտնտեսության նախագահն է Արշակ Մելքոնյանը, իսկ կուսկազմակերպիչը՝ Հրանտ Սահակյանը:

Խանվալու կոլտնեառությունը 1933 թ. մեկ  
աշխորին տվել է 700 զրամ հացահատիկ, իսկ  
այս տարի մեկ աշխորին տվել է 11 կ. հացա-  
հատիկ։ Շատ կոլտնտեսականներ 3—4 փութ-  
յուղ են ստանում և ավելի մեծ քանակությամբ՝  
պանիր։

Դարարոյանում մեկ աշխորին այս տարի  
համում է 12 կիլո հացահատիկ։

Մարտոնու շրջանի Չորագյուղի կոլտնտե-  
սության մեջ հեկտարից 20 ցենտներ բերքն այս  
տարի սովորական յերկույթ է։ Յերեք տարվա  
անբերրիությունից և խեղձությունից հետո, ահա  
թե ինչ են ստում Չորագյուղի կոլտնտեսական-  
ներից յերկուսը։

Հարություն Մոպանն ասում է. «Ես տարի  
մեր կոլխոզում ամեն մեկ աշխորին լնկնում ե  
10 կիլո հացահատիկ. ուրեմն մեր ընտանիքը հա-  
ցահատիկ և ստանալու 70 ցենտներ կամ 420  
փութ։ Ստանալու յենք կարտոֆիլ՝ 603 կիլո,  
կաղամբ՝ 603 կիլո, դաղար՝ 603 կիլո։ Դրանից  
բացի, ստանալու յենք պանիր՝ 90 կիլո, յուղ՝  
32 կիլո»։ Գրիգոր Ա.աւարյանն ասում է. «Ես  
տարի մեր տունը պետք է բերենք համարյա 100  
ցենտներ հացահատիկ։ Այդքան բերք ստանում  
ենք նրա համար, վոր աշխատել ենք բարեխիղճ։  
Այս որինակ, մեր գյուղի «Ներքին Հայիրներ»  
կոչվող 10 հեկտար հողամասից մենք յուրաքան-  
չյուր հեկտարից ստացել ենք 30 ցենտներ գարի։

«Ուկրաինկա» ցորենը, վորը հեկտարից պլանով  
պիտի տար 8 ցենտներ, տվել է 15 ցենտներ։  
Գարնան ցորենը հեկտարից պետք է տար 6,5  
ցենտներ, ստացել ենք 12 ցենտներ։ Գարի՝ յու-  
րաքանչյուր հեկտարից 9 ցենտների փոխարեն  
ստացել ենք 21 ցենտներ։ Տարեկանից ստացել  
ենք 14 ցենտներ։ Այս հաջողությունները պետք  
է բացատրել նրանով, վոր մենք ազրոկանունների  
համաձայն աշխատեցինք։ Լողիներին, չվողներին  
խրատեցինք ու այսպիսով մեր կոլտնտեսական-  
ները վոչ մի ժամ աշխատանքից չբացակայեցին։

Մենք այս տարի ավելի լավ համոզվեցինք  
վոր առանց ազբոնոմի, առանց գյուղատնտեսա-  
կան մեքենաների, նամանավանդ առանց նվիր-  
ված աշխատանքի վոչ առատ բերք կունենանք,  
վոչ ել մեր յերազած կուլտուրական ունեոր  
կյանքին կհամնենք»։

Յեկ այդ վոչ միայն Չորագյուղում, այլև  
Հայաստանի բոլոր շրջանների այն գյուղերում,  
ուր գործի գլուխն իսկական տղամարդ և կանդ-  
նած, ուր գործը կազմակերպված է բոլշեվիկյան  
հմտությամբ, ուր կոլտնտեսականները սրտով ու  
ջիգյարով գործի յեն կպած։ Զանգեզուրի Խնձո-  
րեսկ գյուղի կոլտնտեսությունը կենտկոմին ուղ-  
ղած իր զեկուցման մեջ հայտնում է, վոր պե-  
տական բոլոր պարտավորությունները կատարե-  
լուց և ֆոնդերը կազմելուց հետո, հարվածային-

և բարեխիղն կոլտնտեսականներն ապահովչած  
են 1<sup>1/2</sup>-ից 2 տարվա հացի պաշտրով:

Առաջավոր կոլտնտեսություններն սկսել են  
հրաշքներ գործել Միության բոլոր յերկրներում:  
Այդ հայտնի յե տօխարհին յեվ քող հայտնի լինի  
նայեվ այն աշխատավոր մենատեսեսներին, փո-  
րոնի մինչեվ այժմ տատանման մեջ են: Մենա-  
տեսեսների «միջանկյալ» դրույունը անվերջ  
շարունակվել չի կարող: Նրանց համար միակ  
յեվ փորձված նանապարհը կոլտնտեսության  
նանապարհն ե, կարիքից վերջնականապես ա-  
զատվելու յեվ ունենալու բարգավաճ կյանքով  
ապրելու նախադրյալները կոլեկտիվ տեսու-  
րյան մեջ են:

Այդ համոզմունքը համակում ե մենատնտես-  
ների նորանոր խմբերի: Այդ համոզմունքով նը-  
րանց շարքում նոր շարժում ե սկսվել դեպի  
կոլտնտեսությունները:

Ընկերներ, այս տարվա առաջ բերքը, կոլ-  
տնտեսությունների բերքի բաշխումը, կոլտնտե-  
սականների նորանոր ստվար խմբերի ունենոր  
դառնալը պետք ե ոգտագործել դեպի կոլտնտե-  
սություններ յեղած հոսանքն ուժեղացնելու հա-  
մար: Այդ հոսանքը պետք ե զիսավորել և նրա  
առաջից պետք ե վերացնել արհեստական այն  
արդելակները, վոր հաճախ հարուցում են տեղե-

լում: Միաժաման ակ հետեւողականորեն պէս  
ե կիրառել կոլտնտեսություններին յեվ կոլտնտե-  
սականներին խորհրդային որենքներով վերապահ-  
փած բոլոր արտնությունները յեվ նպատակոր  
պայմանները:

Բոլեկիկորեն կազմակերպելով բերքի բաշխու-  
մը կոլտնտեսություններում, ել ավելի ամրաց-  
նելով կարգապահությունը և տնտեսավարու-  
թյունը կոլտնտեսություններում, լայն ծավալե-  
լով մասսայական աշխատանքը մենատնտեսների  
մեջ, կիրառելով կոլտնտեսություններին և կոլ-  
տնտեսականներին վերապահված բոլոր արտո-  
նությունները, մենք պետք ե փակենք տարին  
նոր մասսայական հոսանք կազմակերպելով  
դեպի կոլտնտեսությունները: Կոլտնտեսություն-  
ների աճումը ներկա շրջանի կարևորագույն  
խնդիրներից մեկն ե:

Ընկերներ, մենք ամփոփեցինք գյուղատնտե-  
սական տարվա մի քանի նախնական արդյունք-  
ները, նշեցինք ներկա շրջանի մի քանի հիմնա-  
կան խնդիրները. վո՞րն ե գլխավոր յեզրակա-  
ցությունը. այն, զոր մենք պարտավոր ենք  
ավելի լարել մեր ուժերը, ավելի լավ աշխատել,  
ավելի աշալուրջ լինել: Հանգստանալու, ձեռք  
բերածով գոհանալու, պարծենալու տրամադրու-  
թյունները ասենավտանգավոր տրամադրություն-  
ներն են: Այս տարվա փորձը ցույց տվեց, թե  
ինչքան դեռ յետ ենք մնում կուլտուրական

գյուղատնտեսական պահանջներից, թե անկուլտուրական աշխատանքի, աշալուրջ չվնելու հետևանքով դեռ ի՞նչ նսկայական կորուստներ ենք տալիս գյուղատնտեսության մեջ։ Փաստերը հաստատում են, վոր ավելի լավ կազմակերպելով պայքարը կրուստների դեմ, կիրառելով բերքահավաքի աշխատանքների ավելի կատարելագործված միջոցներ, մեր կոլտնտեսությունները հենց այս տարի կարող եյին հացահատիկի ամեն մի հեկտարից ստանալ ամենապակասը 4—5 փութ ավելի բերք։

Կատարելով գյուղատնտեսական տարվա ամփոփումները, մեր բոլոր կոլտնտեսությունները քաղբաժինների և կուսկազմակերպությունների դեկավարությամբ պետք եւ լայն ինքնաքննադատություն ծավալեն գոյություն ունեցող թերությունների շուրջը, բարձրացնեն դասակարգային զգաստությունը, ջախջախեն կուլակության մնացորդների, դասակարգային թշնամիների մեքենայությունները և մինչեւ վերջը կատարելով ընկ. ՍՏԱՀԻՆԻ ցուցումները, այնպես նախապատրաստեն առաջիկա տարվան աշխատանքները, վոր 1935 թիվը դառնա կոլտնտեսությունների աձման, ել ավելի ամրացման, բերքատվության բարձրացման, անասնապահության ծաղկման, բոլոր կոլտնտեսականներին բարեկեցիկ և կուլտուրական դարձնելու լավագույն տարին։



ԳԻՒԸ 20 ԿՈԹ.

30. 5743

2-127402



А. ХАНДЖЯН

**На путях подъема колхозного  
животноводства**

(Заключительная речь в беседе с  
колхозниками ударниками-животноводами)

СЕЛЬХОЭГИЗ

1934

ЭРИВАНЬ